

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր  
լեզվաբանության ամբիոնի ղոցենս  
Էլիոսս՝ susannagrigoryan@ysu.am

**Պետրոս Դափանցին ծավալել է գրական լայն գործունեություն։ Նա գրել է բանասիրեղծություններ, որոնք լեզվական դեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Հայ ժողովուրդը առաջին ժառանգորդը դարձավ Պ. Դափանցու քաղցրանվագ երգերի։ Հավելապես նրա եղանակավոր, թվով 36 դադերից շատերը գրան երգարաններում, դարեգրքերում, ամսագրերում, հետաքայում նաև դասագրքերում և երգվեցին ամենուրեք։ Խ. Արովյանը բանասիրեղծություններ է հյուսել նրա երգերի եղանակներով։ Այդ բանասիրեղծություններն առանձնանում են իրենց գեղարվեստական արժանիքներով։**

Ներկայացվող հոդվածը նվիրված է շուրջ 200 նորակազմ բառերի ուսումնասիրությանը, որոնք բացակայում են գրաբարի և միջին հայերենի բացադրական բառարաններում։ Հեղինակը վարպետորեն գործածել է մեր լեզվի հարուստ բառային կազմը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հայերենի բառակազմական հնարավորությունները՝ սրեղծելով նոր բառեր և դրանով իսկ հարստացնելով և՛ իր սրեղծագործությունների լեզուն, և՛ մեր գրական լեզուն։ Պ. Դափանցու բանասիրեղծությունները աչքի են ընկնում լեզվի ճոխությամբ ու պատրկերավորությամբ, գերազանց դադարական գործառությամբ, բառապաշտիք հարստությամբ, ճաշակավոր բառերի ու բառաձևերի ընդունակությամբ, բազմաթիվ նորաբառերի սրեղծմամբ ու փեղին գործածությամբ։ Նորակազմ բառերի սրեղծման բառակազմական եղանակները նոյնին են՝ բառաբարդում և ածանցում իրենց բազմազան արդարականություններով։ Նոյնին են նաև գործառական ավելի մեծ հաճախականություն դրսնորող բաղադրյալ բառերի գրեսակները, որոնք են ածանցավոր բառերը, հոդակապով ու անհոդակապ բարդությունները։

**Բանալի բառեր՝ նորակազմություն, բանասիրեղծություն, գրաբար, բառակազմություն, ածանցում, բարդություն, խոսքիմասային արժեք, միջին հայերեն։**

18-րդ դարի հայ դասական բանաստեղծության ներկայացուցիչ, նշանավոր քնարերգակ Պետրոս Ղափանցին հեղինակ է հայրենիքի, բնության, ազատասիրական, կրոնաբարոյախրատական բանաստեղծությունների, բազմաբովանդակ գեղեցիկ երկտողերի ու քայլակների: Պ. Ղափանցու մասին պահպանվել են կցկուոր տեղեկություններ միայն, որոնցից ամենահները հայտնել է Մինաս Գասայյանը<sup>1</sup>: Հեղինակի մասին գիտական հոդվածներ է տպագրել Ն. Քարամյանը<sup>2</sup>, իսկ արևմտահայ նշանավոր գործիչ Հ. Ասատորը խիստ բարձր է գնահատել Պ. Ղափանցու ստեղծագործությունը: Խրիմյան Հայրիկը հիշում է, որ ինքը շատ է սիրել երգել Պ. Ղափանցու և Քոչակի տաղերը<sup>3</sup>: Լեռն նշում է, որ նրա «Երգերից շատերը լայն ժողովրդականություն ստացան, և մի քանիսը երգվում էին մինչև 19-րդ դարի վերջերը»<sup>4</sup>: Ըստ Շեռողիկի՝ Պ. Ղափանցու «Երգարանը», տպագրվել է Երկրորդ անգամ, նաև 1773 թվականին՝ «...մահէն 11 տարի առաջ, իր քերթուածներու տպագրվելը Երկիցս տեսնելով»<sup>5</sup>: Նա Պ. Ղափանցուն աշուտ է կոչում՝ նրա Երկերի ժողովրդականությունը հաշվի առնելով: Բանաստեղծն իր «Երգարանում» առանձին թվահամարներով դասակարգել է Եղանակավոր և ոչ Եղանակավոր բանաստեղծությունները՝ նշելով, որ «մինչեւ ցաստ երգեցմունք Եղանակատրք, ընդ որս կցորդին եւ թիւ ասացուածքն այսոքիկ, որք հետեւին»<sup>6</sup>:

Հայտնի է, որ Պ. Ղափանցին սյունեցի է, ծնվել է հավանաբար Ղափանում՝ 1700-ական թվականների սկզբին: Եղած փաստերը վկայում են, որ նա 1753-1756 թվականներին Էջմիածնի միաբան էր: Նա նվիրակի պաշտոնով եղել է Ռումելիում, Ղրիմում, Պոլսում, Ադրիանապոլիսում, Արմաշում, համագործակցել է կաթողիկոսներ Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու հետ: Բանաստեղծը վախճանվել է 1784 թ. մարտի 20-ին՝ Նիկոմիդիա քաղաքում:

Սույն հոդվածի համար հիմք է ծառայել 1990 թ. Շուշանիկ Նազարյանի հրատարակած բանաստեղծությունների ժողովածուն՝ որը համալրված է Երեսուն բանաստեղծություններով և մի շարք քայլակներով: Պ. Ղափանցու քնարերգության հիմնական լեզուն գրաբարն է՝ հարուտ, ճկուն և գեղեցիկ դասական հայերենը, սակայն նրա բանաստեղծությունների լեզուն միատարր չէ: Բարդ ու ծանրամարս են նրա կրոնական փիլիսոփայական երգերի մի մասը, ավելի թեթևաշունչ ու դյուրամարս են աշխարհիկ երգերը, հայրենիքի և բնության տաղերը, ապա Երկտող, քառատող բանաստեղծությունները և բարոյախրատական երգերը<sup>8</sup>:

<sup>1</sup>Տե՛ս Մ. Գասապեան, «Հայերը Նիկոմիդիո գաւառին մէջ», Լոս Անջելես, 1913:

<sup>2</sup>Տե՛ս «Արարատ» ամսագիր, Էջմիածնին, 1895:

<sup>3</sup>Տե՛ս Հ. Աճեմեան, Հայոց Հայրիկ, կենսագրութիւն, Թավլիգ, 1927, էջ 733:

<sup>4</sup>Լեռ, Հայոց պատմութիւն, հ. 3, Եր., 1976, էջ 1065:

<sup>5</sup>«Ամէնուն տարեցոյց», Պոլիս, 1915, էջ 10:

<sup>6</sup>Պ. Ղափանցի, Գրքոյն կոչեցեալ Երգարան, Կ. Պոլիս, 1772, էջ 63:

<sup>7</sup>Տե՛ս Շ. Նազարյան, Պ. Ղափանցի, Բանաստեղծություններ, Եր., 1990:

<sup>8</sup>Տե՛ս նոյն տեղում, էջ 19:

Մեր հոդվածի քննության նյութը Պ. Ղափանցու բանաստեղծությունների նորակազմություններն են՝ իրենց բառահմաստային և բառակազմական իրողությունների, խոսքիմասային պատկանելության հաշվառումով, որը խստ արդիական է պատմական բառագիտության և հայոց լեզվի պատմության հետագա զարգացման համար: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ քանի դեռ հրատարակված չեն բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները, լեզվական, բառապաշարային պատշաճ քննության չեն արժանացել գրողների ու բանաստեղծների բազմաթիվ ստեղծագործություններ, նորակազմությունների հեղինակային պատկանելության մասին կարելի է խսել միայն որոշակի վերապահումով: Ուստի հեղինակային նորակազմություն ենք համարել Պ. Ղափանցու բանաստեղծություններից քաղված բոլոր այն բառերը, որոնք չկան գրաբարյան և միջինհայերենյան հայտնի բառարաններում: Մեր ընտրությամբ բազմաթիվ տարակուտելի բառերի համար բերել ենք նաև բնագրային օրինակներ, որոնք տեքստը չծանրաբեռնելու նպատակով տեղադրել ենք հղումների դաշտում: Ըստ մեր հաշվումների՝ Պ. Ղափանցու բանաստեղծություններում տեղ են գտել երկու հարյուրից ավելի նորակազմ բառեր, որոնց ստեղծման բառակազմական եղանակներն են բառաբարդում և ածանցում իրենց բազմազան արտահայտություններով:

Բաղադրյալ բառերի մեծ մասը կազմված է կենսունակ բառակազմական կաղապարներով, որոնցում հաճախված են հոդակապով բարդությունները: Նորակերտ ածանցավոր բառերը ևս հիմնականում ընդունելի ձևեր են, համապատասխանում են հայերենի ածանցման օրենքներին ու օրինաչափություններին, ուստի և ոչ միայն ոճավորում են հեղինակի խոսքը, այլև համալրում են մեր լեզվի բառապաշարը: Պ. Ղափանցին գործառության մեջ է մտցնում ինչպես նախածանցներ, այնպես էլ վերջածանցներ, որոնցով կազմված նորաբանությունները ոճական մեծ լիցքով են հատկանշվում, և այսու մեծանում է ածանցի հատկանշային իմաստը: Քանակով, իհարկե, խստ զիջում են նախածանցավոր նորակազմությունները:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նորակազմ բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում

<sup>1</sup>Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէեան, Մ. Ավերեան, Նոր բառգիրը հայկագեան լեզուի, հ. 1-2, Եր., 1979(այսուհետև՝ ՆՀԲ): Մ. Ավերեան, Գր. Ճելախեան, Առձեռն բառարան հայկագեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ): Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004 (այսուհետև՝ ԳԲ): Ռ.Ղազարեան, Հ. Աւետիքեան, Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007(այսուհետև՝ ՆԲԳ): Լ. Հովհաննիսյան, Նոր հայկազման բառարանում չվկայված բառեր, Եր., 2010 (այսուհետև՝ ԶԲ): Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009 (այսուհետև՝ ՄՀԲ): Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926(այսուհետև՝ ՀԱԲ): Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944 (այսուհետև՝ ՀԲԲ): Գ. Զահորկյան, Հայերէն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Լ. Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Եր., 2013:

գործող ընդհանուր օրինաչափություն է առաջին հերթին գոյականի ակտիվությունը. գոյական + գոյական կաղապարով ստեղծվում են մեծ մասամբ ածականներ գերազանցապես ոճական նպատակով և խոսքում դառնում մակրիրներ:

Ա) **Գոյական+գոյական՝ ակութաքար** (117), **արդասուագեր** (72), **զարնանամայր** (87), **եղեմաբրյու** (172), **թիւնածորան** (135), **թօփթօփ** (32), **լացահեղեղ** (72), **լեռնափեսակ** (136), **լուսալեզու** (142), **լուսագոյակ** (167), **լուսաթերթիկ** (53), **լուսնահաւ** (48), **կաքաւաձայն** (41), **հոգեկրեսակ** (119), **ողբակենցաղ** (83), **սգակրօն** (52), **քլաչավ<sup>2</sup>** (137):  
Բ) **Գոյական+ածական՝ աղինանման<sup>3</sup>** (141), **ակնունակ**<sup>4</sup>(144), **լեռնահանգոյն** (149), **լուսափյլուն** (83), **ձեռնառապէ** (168), **ձիթառապ** (120), **մահամօր** (82), **սիրահասրապ** (167):

Գ) **Գոյական+բայ՝** անձնափար (151), **բօթակրար** (45), **գեհենափար** (125), **դիմապարկար** (171), **երեսաքարշ** (117), **ծորանահու** (77), **ճաշակար** (153), **շաղաբեր** (84), **շաղահիս** (65), **շաղամաժ** (59), **շաղապարար** (170), **պակռապաշ** (150), **սըգաբրորբոք** (78), **տիրասպեղծ** (65):

Դ) **Ածական+գոյական՝ բիւրահարուած** (155), **թաւմազ** (126), **թօնօր<sup>5</sup>** (171), **լիակամ** (105), **լիաճաշ** (164), **խրթնաբառ** (141), **համեսրապեսք** (150), **մեծաբոց** (144), **մեծաշարիք** (122), **յորդաքայլ** (64), **չքնաղափիա** (34), **վերջնաժամ** (92), **սրբալեզու** (148):

Ե) **Ածական+բայ՝ բիւրաբեկբեկ** (77), **թերեբաց<sup>6</sup>** (53), **խառնաբնակ** (141), **մաքրասուն** (161), **մեծահեծեծ** (72), **մեղկախրապ**<sup>7</sup> (185), **ներքնայարդար** (169), **չարկիր**<sup>11</sup>(136), **մեղմափրկունց** (118), **սրանչելայոդ**(149):

<sup>1</sup> **Լեռնափեսակ՝** լեռան նման ծանր. «Մարմինս եղեւ հոգուս իմում, **լեռնափեսակ** բեռն եւ շալակ»(136):

<sup>2</sup> **Քիլ՝** բթամատից մինչև ցուցամատի ծայրն ընդգրկող բացվածքը՝ մոտ 18 սմ: Բառի ծագումն անհայտ է(տե՛ս < Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 578). «Ընձ ոչ ինչ մընաց, **քըլաչափ** կենաց»(137): Պ. Ղափանցին ունի նաև **քիլ-քիլ** կրկնավոր կառույցը՝ «**Քիլ-քիլ** քայլելով եւ ոստոստելով» ( 31):

<sup>3</sup> **Աղեն** կամ **աղին** դրախտ. ասորական փոխառություն է՝ փափկություն. նույն բառի հունարեն ձևից տառադրձված է եղեմ (տե՛ս < Աճառյան ՀԱԲ, հ. 1, էջ 81). «Ի թարթ ական **աղինանման**, միշտ մնացական առ յափտեան»(141):

<sup>4</sup> **Ակնունակ՝** ակնահաճն. «Շահաբեր նաւակ, ծովակ ակնունակ»(144):

<sup>5</sup> Բառը նորակազմնություն է դարձել իր բաղադրիչների դրափիխությամբ՝ **առափածեռն**:

<sup>6</sup> **Դիմապարկառ՝** ամորիսած. «Ի վէճ բանից դիմապարկառ //Հաւան, հըլու և ո՞չ յամառ» (171):

<sup>7</sup> **Երեսաքարշ՝** ստիպողաբար. «Մի՛ տանիցես ըզնա բըռնի, **երեսաքարշ**»(117):

<sup>8</sup> Հավանաբար առաջին արմատը **թօն՝** վավաշող, որ < Աճառյանը համարում է կեղծ բառ՝ թոնոս Կոնկորենոս ասորեստանյան թագավորի անունից(տե՛ս ՀԱԲ, հ.2, էջ 217). «Կամք որսողին ախտի թօնօր, // Կարկեալ մընաց անհետազու»(16):

<sup>9</sup> Բառի մեջ առկա է հիմքի վերջնահնչույթի փոփոխություն՝ հոդակապի ազդեցությամբ: Առաջին բաղադրիչի վերջին ծայնավորը, ծովմելով հոդակապին, տվել է **ե** ծայնակապը:

<sup>10</sup> Գործածված է **հսկակ**, **ուղիղ իմաստով**. «**Զմեղկախրապն** որդոց իլոց՝ ծերն հեղի»( 185):

<sup>11</sup> **Չարկիր՝** չարագույժ. «**Չարկիր** նաւակ, ծով անյատակ, // Զուր անյատակ, անեզրափակ»(136):

Զ) Ածական+ածական՝ չարածարպար (164), սառնափայլուն (56):

Ը) Թվական+գոյական՝ եռորակի (58), եօթնակորայ (377), եօթնասուպակ (13), եօթնավլպակ (165):

Թ) Թվական+բայ՝ միաշարժ (23):

Ժ) Բայ +գոյական՝ զղասէր (123), լալամիդ (78):

Ժա) Բայարմատ+բայարմատ՝ դիզարդ<sup>2</sup> (74), լալակոծ (83), լալաթրթիո (430):

Ժբ) Մակբայ+ գոյական՝ մշբակարօս (103), կրկնապապուար (170), կրկնապիւ (90):

Ժգ) Մակբայ+ մակբայ՝ շուրաշուս (124):

Ածանցման հիմնակաղապարն իրենից ներկայացնում է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևով՝ ածանցի բաղադրություն, իսկ ըստ հիմնական ձևով՝ նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ դրանք բաժանվում են նախածանցավոր և վերջածանցավոր կաղապարների, որոնցից վերջինները մշտապես գերակշռում են: Ածանցավոր բառերի սերող հիմքերը կարող են լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ կազմություններ, ըստ որի էլ առաջանում են նախածանցների և վերջածանցների, ինչպես նաև տարբեր ձևավորում ունեցող հիմքերի ու ածանցների գուգորդություններ: Մենք ածանցմամբ ստեղծված նորակազմ բառերն առանձնացրել ենք՝ ա) ըստ հիմնական ձևով՝ նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ նախածանցավոր և վերջածանցավոր կաղապարներ, բ) ըստ սերող հիմքի կազմության, գ) ըստ ածանցների՝ նորակազմ բառեր կերտելու ակտիվության: Նախածանցավոր կաղապարներից Պ. Դափանցու բանաստեղծություններում առավել հաճախական են պարզ հիմքով մասնակաղապարները՝ հետևյալ նախածանցներվ՝ **ան-**՝ **անարգաւանդ** (176), **աննու**<sup>3</sup> (109), **անշուար** (170), **անօժանդակ** (136), **գեր-**՝ **գերշարունակ** (167), **հակ-**՝ **հակածիր** (120), **հակընթերց** (143), **ներ-**՝ **ներ/ա/մտածել** (185), **ներթուփ**<sup>4</sup> (85), **ներիսոր** (156), **ներիամայն** (112), **ներսոփեսս**<sup>5</sup> (170): Կան նաև նախածանց+հոդակապավոր կամ անհոդակապ բարդ հիմքով կազմություններ՝ **անդիրագիւտ**<sup>6</sup> (78), **անեզրափակ** (136), **անհետընթաց** (125), **անյաղթահար** (169), **անյուսահատ** (122), **անշնչախառն**<sup>7</sup> (161):

<sup>1</sup> Տարբեր որակներ ունեցող. «Տեսլեամբ եւ հոտով գովեալ մանուշակ, //Մանրաթերթ փլթթեալ եւ որց եռորակ»(58):

<sup>2</sup> ՀԲԲ-ում կա **դիզարդել** ձևը, որ նշանակում է՝ իրար վրա բարդել(տե՛ս Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 1, էջ 518):

<sup>3</sup> **Նու**' հավանաբար նկատի ունի հայերեն «**նու**» տաղի անունը. «Ես նախընթաց եղէ **աննու**/, Զի ո՞չ ուսաւ իմըս լեզու» (109):

<sup>4</sup> **Ներթուփ**' թվի գրակ. «Թըռչունքն թըռչին, **ներթուփing** թագչին»(85):

<sup>5</sup> **Ներսոփեսս**' իմաստասեր. «**Ներսոփեսսից**' գեր գեղապար // Եւ հանճարով զոյգ հաւասար»(170):

<sup>6</sup> **Անդիրագիւտ**' դժվարահաս, հեշտությամբ չգտնվող.«Դու ծովային **անդիրագիւտ**

<sup>7</sup> Բառարաններում կա **շնչախառն**' կեսրերան, թեթև շնչով, հետևաբար բառի ժխտականը պիտի նշանակի ամբողջ շնչով, սրբանց. «Այլ որք կըրեն **անշնչախառն** ըզցաւ քաղցուն// Կերպակցապէս լինին հասուն և կատարուն»(161):

Սերող հիմք + վերջածանց կաղապարով նորակազմություններն ավելի հաճախադեպ են, որն անշուշտ բխում է հայերենի բառակերտման առանձնահատկություններից, որտեղ վերջածանցում ավելի կենսունակ է: Պ. Ղափանցու բառապաշտում զգալիորեն արդյունավետ են հետևյալ կաղապարները՝ ա)արմատ+վերջածանց կաղապարով նորակազմություններ՝ այլ[եց]եալ<sup>1</sup> (73), անտառօրէն (114), աքսորութիւն (115), բառիկ (108), բեռնիկ (160), բոլորուն (173), երգնալ<sup>2</sup> (163), երկարապէն (80), թըռուպ<sup>3</sup> (124), իշուր (124), լալապէն (46), լօշուր<sup>4</sup> (124), խղճութիւն (52), ծառայօրէն (89), կարկաչական (36), կեղծական (160), կոչօն<sup>5</sup> (162), հաշուր(6) (111), հոմերաբար (172), ճաշուր (124), ճօշուր<sup>7</sup> (124), մաշուր<sup>8</sup> (111), մրափուն (161), յեցութիւն<sup>9</sup> (79), նաղշուր (124), ներբողաբար (67), պիծակիկ (109), ջեռուր (174), սակաւուկ (128), վանկիկ (108), վարապ<sup>10</sup> (128), վարդեալան<sup>11</sup> (94), տաշուր<sup>12</sup> (111), տիսմարիկ (109), ուշուր (111), փար[եց]ումն (47), փոշուր (124), քօշուր<sup>13</sup> (124): Բ) մեկից ավելի վերջածանցներով բաղադրություններ, որտեղ վերջածանցների զուգորդությունները ստացվում են վերջածանցավոր երկրորդային

<sup>1</sup> **Այլեցեալ'** այլ դարձած՝ կերպարանափոխված՝ «Կարմիր գունով, անոյշ հոտով **այլեցեալ'**»(73):

<sup>2</sup> **Երգնակ'**փոքր երգ. «Որպէս **երգնակ** ի սկր վարդի անլուր գոչէք»(73):

<sup>3</sup> Արմատը **թուշ** բառն է. «Նետիք աչացդ խաղաս միշտ ի վերայ իմ// Իբրեւ զսընծոր կարմիր, յոյժ կարի **թըռուր**»(124):

<sup>4</sup> Հավանաբար **լօշ** արմատից է՝ բարակ, թերթանման հաց, որը գործածված չէ իին մատենագրության մեջ (տե՛ս < Աճայան, ՀԱԲ, հ. 2, էջ 308). «Որպէս թէ իցես դու ճաշուտ(ճաշ արմատից) ու **լօշուր**(124):

<sup>5</sup> Բառարաններում գործածված է բառիս միայն հոգնակիի ձևը՝ **կոչօնք**՝ կոչք, կանչելլ:

<sup>6</sup> **Հաշչ հարշ, խաշչ մաշված, նիհար, տկար.** բառի ծագումն անհայտ է (տե՛ս < Աճայան, ՀԱԲ, հ. 3, էջ 42: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 447): ՆՀԲ-ում բառը ծորդվում է թուրք. **աշընմագ՝** մաշիլ բառին(տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 47). «Մի՛ կերիցես մաշուտ, // Եւ լիցիս **հաշուր**»(111):

<sup>7</sup> **Ճօշ՝** բամբասանք, ճօշալ՝ չարախոսել: Բառի ծագումն անհայտ է(տե՛ս < Աճայան, ՀԱԲ, հ. 3, էջ 218: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 498: Միջին հայերենի բառարան, էջ 481): Գրաբարյան բառարաններում արձանագրված է բառը միայն **լանջապանակ, կրծքի զրահ** իմաստով (տե՛ս Անձեռն բառարան, էջ 532: ՆՀԲ, հ. 2, էջ 187):

<sup>8</sup> Նկատի ունի մանր ոլորը (տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 208-209). «Դի առաւել տայցէ ոյժ **մաշուր,** կաշուր»(111):

<sup>9</sup> **Յեցութիւն՝** հենարան, նեցուկ. «Դու անկելոյ սըրտիս նեցուկ **յեցութեանց**»(79):

<sup>10</sup> **Վարապ.** բառը կապվում է **վայր** բառի հետ՝ վայրել, վայրիլ, վայրափել՝ հեռացնել (տե՛ս Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ. 4, էջ 308: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 706): «Սիրելի է միակ որդին, // Թէեւ վարապ՝ քիչն անոյշ է»(128):

<sup>11</sup> Այս կաղապարում ազատ հիմքը՝ **վարդ** բառը, -ի հանգը չունի, սակայն առկա է հնչյունափոխություն:

<sup>12</sup> **Տաշուր**'հղկված, տաշված, կոկած. «Եթէ իցես ուշուտ(ուշացող), // Կա՛լ բիւրեղ տաշուր»(111):

<sup>13</sup> Բառի արմատն է **քօշ՝** արու այժ, նոխազ. «Ի թէն փախչիլ գընալ, առաւել լաւ է // Ի լերինս բարձրագոյնս, **քօշուր** եւ իշուտ»(124):

հիմքերին կցվելուց եռ(**անդ**)(**ոսր**)ն(եալ) (71), խորշ(**ակ**)**իկ** (109), խթ<sup>1</sup>(**ան**)(**իկ**) (92), հաճ(**ոյ**)(**ապէս**) (83): Գ) վերջածանցավոր նորակազմություններ, որոնց սերող հիքը բարդ բառ է՝ ականջադրուկ (116), այլայլուն (142), երամախառնեալ (88), ինքնաջանեալ<sup>2</sup> (126), խանդաղակաթեալ (95), խաշխաշուպ<sup>3</sup> (124), կարկատելի (183), կարօտահարեալ (31), հեզաքայլուն (98), հողմավարեալ (81), մըգաթափեալ<sup>4</sup> (60), մեղրածորակ (141), մշմշուպ<sup>5</sup> (124), յարապահեալ (84), սերմնառու (116), տիրակերտիկ (53): Դ) վերջածանցավոր հիմք +վերջածանց ունեցող կազմություններ<sup>6</sup> (դիեցիկ)<sup>7</sup>**արար** (44), (երփնատր)եալ (100), (խթան)իկ (92), (որդեկ)իկ (160): Ե) նախածանց ունեցող երկրորդային սերող հիմքով վերջածանցավոր կազմություններ՝ **անթերապ**<sup>8</sup> (168), **անխթան** (135), **անխրփան**<sup>9</sup> (127), **անուշիմ** (155), **անփական** (127), **ներիեղիչ** (98), **ներծղփանը** (127), **չերբէք** (138):

Բանաստեղծը հետաքրքիր, գեղեցիկ նորակազմություններ է ստեղծել նաև բայական ածանցներով. բայերի կերտումը այլ խոսրի մասերից տեղի է ունենում կամ պարզապես բայական վերջավորության կցումով՝ անկակալել (75), աղթողով (177), աստեղաշարիկ (84), բերկրաբերել (27), դերել<sup>10</sup> (30), զղասիրիկ (123), ծալծալիկ (25), ծործոքել (44), հակագրել (100), համախառնել (57), հաւաիկ (86), ճամկել (146), յարամաշիկ<sup>11</sup> (117), նարօտիկ (71), ներաբազմել (171), ներախառնել (140), շնչաքաղել (46), վայվայել (69), վրանագահիկ (85), տապախառնել (24), տարտապիկ (44),

<sup>1</sup> Թերևս բնիկ հնդեվոր. **khid** խփել, հրել արմատից, հին հնդկ. **kheda'** ճնշում, ծանր բեռ, նաև հայերեն **խխար**<sup>1</sup> և աճականով՝ **խիթ**, **խթել** (տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 332):

<sup>2</sup> Հավանաբար՝ ինքոր քեզ չխնայելով. «Հի՞մ յայս, յայն կոյս տատանիլով// **Ինքնաջանեալ** անօրինիս»(126):

<sup>3</sup> **Խաշխաչ**<sup>2</sup> մեկոնիոնների կարգին պատկանող բնաբեր բույս(տե՛ս Ս. Մալխասեանց, ՀԲԲ, հ.2, էջ 240):

<sup>4</sup> **Մըգաթափեալ**<sup>3</sup> մեգից՝ մշուշից ազատված.. «... **մըգաթափեալ** արդէն ցընծամ նոր ի նորոյ»(60):

<sup>5</sup> **Մշմշուպ**<sup>4</sup> հովի հանդարդ մշմշալը. «...ընդ արեգակամբս եղեր մեզ օր մշմշուպ»(124):

<sup>6</sup> Այս կաղապարներում վերջածանցների զուգորդությունները ոչ թե բաղադրյալ ածանցներ են, այլ ստացվում են երկրորդ վերջածանցի՝ արդեն իսկ վերջածանցավոր երկրորդային հիմքերին կցվելուց(տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 208):

<sup>7</sup> **Դիել**<sup>1</sup>.մոր կամ դայակի կաթը ծծել, 2.Սնուցել, կերակրել (տե՛ս Ռ. Ղազարյան, ԳԲ, հ. 1, էջ 369), **դիեցկաբար**<sup>5</sup> կաթնակերի նման. «Յորորը մըտօք **դիեցկաբար**, // Ծըծեալ զիմաստըն յրդիացար»(44):

<sup>8</sup> **Անթերապ**<sup>6</sup>՝ ոչ թերի, ամբողջական. «Անդ աղօթիւք բողոք կալիք, //Ասա լըրիւ եւ անթերապ»(168):

<sup>9</sup> **Անխրփան**<sup>7</sup> առանց կափարիչի. «Պոյտ(պուտուկ, կճուճ) **անխրփան**, դուռն անփական, //Հանճարաշատ առ ի չարիս»(127):

<sup>10</sup> **Դերել**<sup>8</sup> միմյանց հետ շփվել, հարաբերվել.« Զաշխարի մարմին՝ վեճխընդիր, // Ի վերայ քո՝ **դերել** փութայ»(30):

<sup>11</sup> **Յարամաշիկ**<sup>9</sup> անընդիատ մաշվել, քայթավել. «Թեպէտ հըրով **յարամաշիկ**՝ ինքն է անպէտ»(117):

տօնակցիլ<sup>1</sup> (86), կամ, որ ավելի ցայտուն է դարձնում բայակազմությունը, **անալ** բաղադրյալ բայակերտ ածանցով<sup>2</sup> մերանալ (24):

Պ. Ղափանցին ստեղծել է նաև վերլուծական կազմությամբ նոր բառեր՝ ա) բայական հարադրություններ՝ բայի և անվանական մասի բազմազան գուգորդումներով՝ հիմնականում գոյական + բայ կաղապարով՝ **բողոք կալնուլ** (106), **զեն փալ** (24), **զրոյց փալ** (21), **ժանգ անկանիլ** (113), **լրումն առնուլ** (48), **ճարակ հնարել** (24), **յուսով մնալ** (106), **դրնազ արկանել** (125): Բ) Անվանական շաղկապական նորակազմ հարադրություններ՝ **բեռն եւ շալակ**<sup>3</sup> (136), **խըրագր եւ բան** (135), **խոչ եւ խափան** (132), **դեղ եւ բնակ** (62), **ցող ու շաղ** (75), **փոյթ ու յօժար** (160):

Կրկնավոր նորակազմություններ են ա) պարզ արմատական բաղադրիչներով կազմություններ՝ **գոլ-գոլ** (32), **դիլ-դիլ** (32), **լիլ-լիլ** (32), **ծով-ծով** (32), **մայիլ-մայիլ** (103), **չի-չիլ** (31), **քիլ-քիլ** (31), **քոլ-քոլ** (32), բ) հնչունափոխված երկրորդ բաղադրիչով կազմություն՝ **հաշիլ-մաշիլ** (44): Յուրատեսակ իմաստային կրկնություններ են նրանք, որոնց բաղադրիչները իմաստով նույնն են, իսկ ձևով թեև բացարձակ նույնական չեն, սակայն հարանվանական մերձավորություն ունեն<sup>4</sup>. **թաւալ-թաւալել** (76), **շուրջ-շուրջանակի** (27), **պարան-պարանել** (70), **ցողուղ-շաղուղ** (79):

Այսպիսով, Պ. Ղափանցին, ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական գործող օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի նրբերանգային բազմաթիվ հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ դրանով իսկ հարստացնելով ոչ միայն իր բանաստեղծությունների, այլև մեր լեզվի բառային կազմը: Նա իր բանաստեղծություններում հայերենի բառագանձը փորձել է համալրել ու հարստացնել նոր ու գեղեցիկ բառերով, և նրանցից շատերը այսօր էլ արդիական են և գործածելի: Բանաստեղծի գրական ժառանգությունն ամբողջությամբ ուսումնասիրված չինելու պատճառով միշտ չի որոշվել նրա պատմական դերը: Նա գնահատվել է որպես սիրո երգիչ, սիրո քնարերգակ: Պ. Ղափանցու գրական վաստակը շատ մեծ է բառերի ընտրության, բառաձևերի ու բառակապակցությունների ստեղծման և դրանց կիրառման հարցում: Նրա բանաստեղծությունները բանասիրական տեսանկյունից խիստ արժեքավոր են և կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության:

### Օգտագործված գրականության ցանկ

#### 1. «Ամէնուն տարեցոյց», Պօխս, 1915:

<sup>1</sup> **Տօնակցիլ**' ցնձալ, խնդակցել, ուրախանալ. «Տօնակցին լերինք, ցընձայ ձորանին»(86):

<sup>2</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 300:

<sup>3</sup> Բարբառներում գործածվում է **բեռնաշալակ** բառը (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Եր., 2001, հ. 1, էջ 179):

<sup>4</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Երևան, 2016, էջ 42:

2. «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1895:
3. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926:
4. Աճեմեան Հ., Հայոց Հայրիկ, կենսագրութիւն, Թավրիզ, 1927:
5. Ազերեան Մ., Ճէլալեան Գր., Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Վենետիկ, 1865:
6. Աւտիքիթեան Գ., Սիւրմէլեան Խ., Ազերեան Մ., Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հ. 1-2, 1836-1837:
7. Գասապեան Մ., «Հայերը Նիկոմեդիո գաւառին մէջ», Լու Անցելես, 1913:
8. Լեռ, Հայոց պատմութիւն, հ. 3, Երևան, 1976:
9. Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013 :
10. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, 2001:
11. Հովհաննիսյան Լ., Նոր հայկացյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:
12. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
14. Ղազարեան Ռ., Աւտիստեան Հ., Նորայայտ բառեր գրաբարում, Երևան, 2007:
15. Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004:
16. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009:
17. Ղափանցի Պ., Գրքոյկ կոչեցեալ Երգարան, Կ. Պոլիս, 1772:
18. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944:
19. Ղազարյան Շ., Պ. Ղափանցի, Բանաստեղծություններ, Երևան, 1990:
20. Զահուկյան Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:

## NEOLOGISMS IN PETROS GHAPANTSİ'S VERSES

**GRIGORYAN SUSANNA**

*PhD in Philology,*

*Associate Professor of the Chair of History  
of the Armenian Language and General Linguistics,  
Yerevan State University  
e-mail: susannagrigoryan@ysu.am*

Petros Ghapantsi undertook a wide literary activity. He wrote verses of great linguistic value. The Armenians became the first heir to P. Ghapantsi's sweet songs. Many of his especially melodic 36 songs were found in songbooks, yearbooks, magazines, and later in textbooks and were sung everywhere. Kh. Aboyan composed verses on the motif of his songs. These verses have great artistic value.

The given article is devoted to the study of more than 200 words absent in Grabar's explanatory dictionaries and in the Middle Armenian language. The author skillfully made use of the rich vocabulary of our language and its word-formative opportunities, creating new words when necessary and enriching both the language of his works and our literary language. P. Ghapantsi's poems are distinguished by the richness and expressiveness of their language, beautiful style, the wealth of their vocabulary, the skillful choice of words and word forms, and the creation and appropriate use of many new words. The lexical methods of forming new words are the same - lexicalization and derivation with their various expressions. The types of compound words demonstrating a higher functional frequency are also the same. These are derived words, words with and without a connecting component.

**Keywords:** *neologism, poem, Grabar, word formation, derivation, compound word, part of speech, Middle Armenian*

## НЕОЛОГИЗМЫ В СТИХАХ ПЕТРОСА ГАПАНЦИ

ГРИГОРЯН СУСАННА

Кандидат филологических наук, доцент

Преподаватель кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

электронная почта: susannagrigoryan@ysu.am

Петрос Капанци развил широкую литературную деятельность. Он написал стихи, представляющие собой большой лингвистический интерес. Армянский народ стал первым наследником благозвучных песен П. Капанци. Многие из его мелодичных стихов, особенно 36 из них, нашли место в песенниках, ежегодниках, журналах, а позже и в учебниках и распевались повсюду. Х. Абоян сочинял стихи по мотивам его песен. Эти стихи отличаются своим художественным достоинством.

Данная статья посвящена изучению более 200 слов, отсутствующих в толковых словарях грабара и среднеармянского языка. Автор умело использовал богатый словарный запас, а также словообразовательные возможности армянского языка, создавая при необходимости новые слова и обогащая тем самым как язык своих произведений, так и наш литературный язык. Стихи П. Капанци отличаются богатством и образностью языка, прекрасным стилем, насыщенностью словарного запаса, умелым выбором слов и словоформ, созданием и уместным использованием множества новых слов. Лексические способы образования новых слов одни и те же: лексикализация и деривация с различными их выражениями. Типы сложных слов,

демонстрирующих более высокую функциональную частоту, также одинаковы: это производные слова, слова с соединяющим компонентом и без него.

**Ключевые слова:** неологизм, стихотворение, грабар, словообразование, деривация, сложное слово, часть речи, среднеармянский язык.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 01.09.2024թ.։

Հոդվածը գրախոսվել է 15.09.2024թ.։

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.։